

րենայ. ուստի և Գեր. ժանտոն հետեւեալ յունիս 7 հրամանագրով մը պատուիրեց Հայոց որ տպագրեալ ամէն թերթերէն երկու օրի. նակ իրեն յանձնուին, որպէս զի կարող ըլլայ սրբագրել այն վրիպակներն որ սպրդած ըլլան : Բայց եպիսկոպոսը պիտի չկարենար այս փափուկ ու գծուարին գործը ի գլուխ հանել. վասն զի Մարտէլլի ամթուէն ի Պոլէ փոխադրուելով ի 1679, ի պարագութեան մնաց իր գահը, ու ֆիլիպ Տըպոսէ քահանայի մը (prévôt) յանձնուեցաւ անոր վիճակին առժամանակեայ կառավարութիւնը, և որ յերկարեցաւ մինչև ի 1682 :

Շարունակելի

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

### ԲԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՄՈՒԹԻՒՆ ՀՈՄԵՐԱԿԱՆ ՈՒՍՄԱՆՑ

Բրուսիոյ տարեգիրք՝ Մարտի պրակին մէջ ամբողջ կը հրատարակեն Պօղոս Քաւէրի Գելի համալսարանին մէջ կարգացած ակադեմական ճառը, որ կատարեալ և օգտակար համառօտութիւն մ'է հոմերական խնդրոյն արդի վիճակին, յորում կը պարունակուին նաև շատ կարևոր և ընդհանուր խորհրդածութիւնք : Իմաստուն բանասէրն կը խնդրէ թէ արդեօք բանասիրութիւնն կրնայ ոչև ևս նըկատուիլ իրեն մի և ազատ գիտութիւն : աշմերոս, կ'ըսէ նոյն բանասէրն, դասական հնութեան փոքրիկ մաս մ'է. իլիական և Ոգեսականն միատեղ տպագրուած են ութիցեան 800 իջից մէջ. և յիբաբաբ բանասէր չեղող անձ մի ծաղրածութեամբ կը հարցնէ՝ թէ մինչև ցարդ ըստ բաւականի տպագրուած չլին այս հին բանաստեղծութիւնքն, և թէ կայ արդեօք միշտ նոր բացատրելու բան մի անոնց մէջ : Այս անձին զարմանքը աւելի պիտի աճի՝ եթէ գիտնայ թէ այս երկասիրութեան ասպարէզն, որ իրեն աչաց ամենափոքր կ'երևի, յանհունս ստորաբաժանմամբը՝ զանազան մասնական ուսումնական կրթութիւններ յառաջ բերած է, որոյ իւրաքանչիւրն կրնայ մարգաթաւ մը բովանդակ կենաց մէջ աշխատութեան նիւթ ըլլալ. և զարձեալ եթէ իմանայ որ գիտնականք այս ասպարիզին զանազան մասանց վրայ աշխատելով յաճախ մթութեան խաւարին մէջ ինկեր ենք :

Արդ Քաւէր այս ոճով կ'սկսի հոմերական խնդիրը բացատրել : Հին գրականական երկասիրութեան վրայ ուսումնական աշխատութեան հիմն է լանալ գտնել անոր բնագիր մը՝ ըստ կարելոյն անսխալ. և հիմա այս լանքն կայ ամենայն գիտնականաց մէջ : Յոյն քերականաց զրա՝ ծանօթութիւնքն Հոմերի գրոց լուսանցքն՝ աւելի

կը գժուարացընեն աշխատութիւնը: Ուրիշ հին ձեռագրաց քննութեան մէջ բաւական է զընագիրն ուղղագրել ընտրելագոյն ձեռագրի մը և կամ զանազան ձեռագիր օրինակաց համեմատ: Իսկ առաջիկայ նիւթիս մէջ հարկ է քննել ևս ամենայն ծանօթութիւնքը, Պտղոմեանց թագաւորութենէն սկսեալ մինչև յերկոտասաներորդ դար յետ Գրիստոսի, բազմաթիւ հին բանասիրաց ընտրին վրայ ըրած քննութիւնքն ուղղագրելու համար. պէտք է համբերատար կերպով ուսումնասիրել Արիստարքոսի երկասիրութիւնը, Աղեքսանդրիոյ ընտիր և Բիւզանդիոյ դժուարիմաց հաւաքաց գործերը, յորս կը գտնուին ճշմարիտ գիտութեան մի քանի սուկեղէն հատիկներ: Վաթսուն տարիէ ի վեր գիտնականաց խումբ մի այս բանիս կ'ըրաւ, և հարկ է խոստովանել ֆէժնիկսպէրկի գալրոցին բանասիրաց արդիւնքը և արժանիքը:

Քաւէր կը ցաւի՝ որ Հոմերի վրայ արդի ուսումնասիրողք կը ջանան իրարմէ ոչ միայն հեռանալ իրենց վաստակոց մէջ, այլ նաև իրարու դէմ կուռիլ. վասն զի մինչդեռ լէհարի հետևողք կարծես թէ կը ջանան յամենայնի Արիստարքոսի բնագիրն ուղղագրել, ընդ հակառակն նոր ուսումնասիրաց խումբ մի Արիստարքոսի թուականին վրայ և ոչ իսկ կ'ըրաւր, որ հոմերական քերթուածէն բուական ետ, քըն է, և հարկ է նորանոր քննութեանց ձեռք զարնել: Արդ հարկ է որ այս կրկին խմբերն իրարու օգնեն և զիրար կատարելագործեն, փոխանակ իրարու հետ կուռելու: Եւ յիրաւի, հարկ է և զայս 'ի նըկատի առնուլ որ այս երկու քերթուածոց կատարումը եղած է շատ շատ յէ դարու նախ քան զԳրիստոս: Իսկ Արիստարքոս երկրորդ դարու մարդ է, ուստի լեզուի ոճեր և ձևեր կրցան մտնել ևս և վեցերորդ, հինգերորդ, չորրորդ դարուց մէջ, և Աթենացւոց Հինգերորդ դարու մէջ գործածած նոր ճիշտ ուղղագրութիւնն ըստ բաւականի ազդեցութիւն ունեցած է Արիստարքոսի երկասիրութեան վրայ: Եւ եթէ այս բանն բննիք, կրնանք յուսալ հոմերական բնագրոց պատմութեան մէջ քայլ մի ևս ևս աստիճան մի յառաջ երթնալու: այսինքն, Պիսիստորատի և Սոլոնի ժամանակ անոնց եղած վիճակին վերածել զանոնք, Սակայն այս խնդիրն բարձրագոյն խնդրոյ մը հետ սերտ կապակցութիւն ունի:

« Հոմերոսի քերթուածին մեր ձեռքը հասած բովանդակութեան մէջ, զանազան ծագումն և թուական ունեցող մասունք իբրբու հետ միացեալ էին. ուստի եթէ մենք ջանանք անոր ամենայն մասունքը առաջին հին լեզուի ոճին վերածել, կարելի է թէ փոփոխութիւն կըրեն սողերն և կամ մասն մի սողից, որք համեմատաբար նոր ոճով և ձևով յօրինուած են իրենց հեղինակներէն: Գիք ջանաց մեծ ճարտարութեամբ որոյնչ հին մասունքը 'ի նորոց երկու քերթուածոց մէջ ալ. և իւր աշխատութեան հիմն զրաւ ֆիրիսօֆի՝ Ողիսականին աը.

պագրութիւնը, և կրօտի՝ իլիականինը: Եւ այսու խնդրոյ ուրիշ ճիւղ մ'ալ բուսաւ. և դիւրին չերևիր գասննք իրարու հետ միացընել կարգաւորեալ կերպով:

Լախմանի քաջութեամբ պաշտպանած գրութիւնն ալ ծանօթ է ամենուն. « Սա կը կարծէր թէ յիլիականին կայ իրարու հետ կապակցութիւն չունեցող երգոց շարք մի, որք 'ի սկզբան զատ զստ չէին, և յետոյ ուրեմն քովէքով բերուեցան օտար ձեռքէ մը՝ որ զանազան կտորներ վրան աւելցուց, որպէս զի կարենայ զամէնքը ամբողջութեան մը վերածել »:

Եւ թէ ընդունինք զայս, շատ հակասութիւն և դժուարութիւնք կը բացատրուին, բայց անըմբռնելի կը մնայ նոյն գրոց ընդհանուր միաձայնութիւնը, սերտ միութիւնն, որ պայծառ կը տեսնուին երկու մեծ դիւցազններգութեանց մէջ ալ, իսկ կրողի և ֆիրթօֆի կարծիքն՝ աւելի զարգացուց զինդիրն, որոնք կը համարին թէ փոխանակ բազմաթիւ և համառօտ երգոց, սակաւաթիւ և մեծամեծ բանաստեղծական գրուածներէ բազկացած է այս օրուան օրս մեր ձեռքը հասած երկասիրութիւնը: Եւ այս՝ Լախմանի գրութեան հակառակ չէ, այլ մանաւանդ թէ անոր յառաջադիմութիւն մ'է: Միւլէնհօլֆ և Վիլմէնն ալ նոյն ոճով բացատրեցին Նիպեղունիի երգոց խնդիրը:

Այլ յետոյ իմացուեցաւ որ այս զանազան երգոյ մի քանին չէին կրնար առանձին առանձին շինուած ըլլալ, և պէտք է որ նախնաբար յօրինեալ ամբողջ գրուածոյ մը վրայ իբրև յաւելուած գրուած ըլլան: Ուստի այդ երկու դիւցազններգութիւնք բաղկացած չեն զանազան կատարեալ մասանցմէ, այլ իւրաքանչիւրն կամաց կամաց կազմուած է յառաջագոյն գրուած կտորով մը՝ յասն զի վիպասանական արուեստի կրթութեան ատեն իւրաքանչիւր երգիչ՝ իւր նախորդներէն ձեռքը հասած ամբողջ գրութեան վրայ կ'աւելցընէր նոր և օգտակար յաւելուած մի և կամ ամբողջ նոր երգ, զոր կը հանէր կամ 'ի պատմական աւանդութեանց և կամ իւր երևակայութենէն, մինչև որ յետին բանաստեղծ մը այս ամբողջ երկասիրութեան արտաքին ձև մի տուաւ՝ զոր մենք այսօր կը նկատենք:

Արդ բնական է՝ թէ այս յաւելուածոց նորերն դիւրաւ որոշուին բնագրին մէջ, իսկ հիներն՝ դժուարաւ որոշելի ըլլան: « Ուստի մեր նըպատակն այն չէ՝ այսինքն զճշմարիտ Հոմերոսն մաքրել յօտար յաւելուածոց, այլ այդ մեծ ամբողջութեան մէջ՝ որ 'ի զանազան մասանց բաղկացեր է, գտնել այն մասանց շարքը, և թէ ինչպէս ձևացեր և իրարու հետ կապուեր են »:

Հոմերական խնդիրն՝ ըստ որում բացատրեցինք, դեռ ևս պայծառ և գոհացուցիչ կերպով չի լուծուիր: Իսկ գաւառական լեզուաց խնդիրն աւելի կը դժուարացընէ զլուծումն: Բանասէրք ոմանք հա-

մարին՝ թէ Հոմերոս դիտմամբ զանազան գաւառաց լեզուով դրեր է, որպէս զի իւր ազգային դիւցազներգութիւնը ընդունելի ըլլայ ամենայն հելլենական ցեղից: Սակայն, եթէ եւողեանն և յոնիականը կան, ինչո՞ւ դորականն կը պակսի հոն: Ինչո՞ւ քերթողն զրկէր այս ազգային երկասիրութեան վայելմանէն այնքան դորական ոճով յունախօսներն: Արդ այս ամենայն հարկ է որ յառաջ եկած ըլլայ բնական կերպով և ոչ դիտմամբ: Պէտք է ընդունինք՝ որ յոնիական ցեղէն առաջ ուրիշ ցեղ մի դիւցազներգութիւնը հնարեց և Յոնիացիք անկէ սորվեցան զայն, և միանգամայն այս նոր արուեստի կրթութեան հետ բազմաթիւ բառեր և բացատրութիւններ, Ռիչլի տուած բացատրութիւնն այս է. և Հենրիխ ալ ջանաց որոշելու Հոմերոսի մէջ գտնուած եւողեան՝ քերականական և ձայնական ձևերն, և կամ զանոնք՝ որ կը վերաբերին այն ժամանակին՝ յորում յեւողեանց Յոնիացոց անցաւ դիւցազներգական բանաստեղծութիւնը: Ֆիք ուրիշ աւելի համարձակ դրութիւն մի հնարեց, այսինքն թէ՛ եւողեան սկզբնական երգերն բառ առ բառ թարգմանուեցան ՚ի յոնիական գաւառական լեզու, և այս թարգմանութեան մէջ՝ այն տողերն որ յոնիականով չէին կրնար ըստ ամենայնի ճշգրտեամբ բացատրուիլ, ՚ի հարկէ եւողեան ձևոյն մէջ պահուեցան: Այս կարծիքն շատ հակառակորդներ ունեցաւ. սակայն քաւէր հետեւել զի. տողութիւն կ'ընէ՝ թէ՛ ասուումական դրութեան մը արժէքը պէտք չէ հաստատուի անոր ճշգրտեան վրայ, այլ բաւական է որ իրական արգասիք մ'ունենայ զայն հաստատելու ջանքն և ուսումն: Եւ այս բանս Ֆիքի դրութեան կը յարմարի, Բաց աստի կրնան հաստատել թէ՛ այն երգերն աւելի հնագոյն են՝ որք ամբողջապէս կրնան թարգմանուիլ յեւողեանն. իսկ նորագոյնք են՝ որոց մէջ անթիւ յոնիական ըսուածք և բացատրութիւնք կան: Ահա գիտութիւնը քննադատութեանց ճամբուն վրայ է: Սակայն միշտ պիտի խնդրուի թէ՛ ինչպէս դիւցազներգութեան արուեստն կրցեր է ոնցնիլ մի ցեղէ յայլ: Յայտ է՝ թէ՛ այս առաջարկութեան լուծման համար հարկ է մեր քննադատութիւնքը առաւելուլ, և Հոմերոսի աշխարհագրական և պատմական հիմք լաւ մը քննել:

Քաւէր պատմական աւանդութիւնը կը բացատրէ՝ ըստ որում բանասիրութեան յառաջ բերած արգասեաց կը համաձայնի: Յունական դիւցազներգութեանս ծագումն եղած է ՚ի Թեսաղիա և յիւողեան գաղթականութիւնս: Յետոյ յոնիական մասունքն կը յաւելուն, յոնիացիք բանաստեղծ երգչաց արուեստը կը սորվին և կը սկսին երգել այդ երգերը՝ իրենց սկզբնական գաւառական լեզուով: Եւ ապա կամաց կամաց նոյն երգոց մէջ կը մտնեն յոնիական ոճեր և շարագրածք, և վերջապէս կը կազմուի խառն դիւցազներգական լեզուն: Եւ չէ զարմանք՝ թէ՛ Յոնիացիք ուրիշ ցեղի փառաւոր դոր-

ծոց երգերը կը գործածէին, վասն զի նոյն բանը կը տեսնենք գերմանական և հին գաղղիական դիւցազններգութեանց մէջ ալ:

Կրնայ հարցընել որ՝ թէ ինչպէս իրիականն և Ռդիսական երկու զանազան ցեղից և գաւառաց մէջէն ենելով, կրցեր են պահել միակերպ քաղաքակրթութեան պատկերը:— Սակայն եթէ դը ուշի ուշով քննէ զայս՝ շատ տարբերութիւններ և կամաց կամաց յառաջադիմութեան հետքեր կը գտնէ: Վիլամովից և Հէլպիկ այս մասին վրայ ըստ բաւականի աշխատեցան, բայց տակաւին ուսումնասիրելու կարօտ է:

Քաւէր կ'անցնի ապա զանազան օրինակօք բացատրել պատմական հոմերական քննութիւնքը. այսինքն, թէ ինչպէս մեզի հասած երգոց մէջ պղնձոյ գործածութիւնն յայտնի կը տեսնուի, մինչդեռ իլիոնի աւերակաց մէջէն քարեղէն գործիք միայն կը գտնուին. դարձեալ՝ իրիականի չորրորդ և եօթներորդ երգոց մէջ, որ կրողի բանասիրական քննութեանց համեմատ՝ նոր կ'երևին, երկաթեայ զէնքերու վրայ կը խօսուի. բայ աստի, քերթուածին այս ինչ մասին մէջ աստուածական տաճարներ կ'երևին, իսկ ուրիշ տեղ սքրազան անտառաց մէջ կանգնուած սեղանք ՚ի մէջ կը բերուին. — վերջապէս կը բայցատրէ՝ Հոմերոսի զանազան մասանց մէջ գտնուած հոգեոց պաշտաման, անմահութեան հաւատոց, կրօնական սովորութեանց, յուրարկաւորութեան ծիսից վրայ եղած գաղափարաց տարբերութիւնքը:

Եւ վերջապէս հոմերական խնդրոյն մէջ այս բանիս ուշ դնելու է, որ այդ երկու դիւցազներգութիւնք՝ որ յունական պատմութեան սկզբան մօտ կը համարուին, ստուգիւ յառաջադիմութեան երկար և կարիտը շրջանի մը վերջ տուեր են: Եւ արդէն իսկ հիմայ նախհոմերական ժամանակաց, բանաստեղծական չափուց, և նախնական եւ. զեան բանաստեղծութեան վրայ զանազան քննութիւնք կը կատարուին: Եւ միշտ — այսպէս կը կնքէ Քաւէր — հարկ է գառնալ այս հիմնական սկզբան՝ թէ ոչ դը կրնայ ապահովութեամբ պարզել քերականական ձև մի և կամ բնագրի խանդարում մի սքրագրել, եթէ հոմերական խնդրոյն բովանդակ առաջարկութեան հետ չկարենայ միացընել իւր քննադատութիւնը. և դարձեալ՝ նա միայն կրնայ ուղիղ գատատան ընել ամբողջ առաջարկութեան վրայ, որ կրցեր է իւրաքանչիւր մասնական քննադատութիւնքը միևնոյն հասարակաց կէտի մը վերածել:

Այս բանս միայն հոմերական ուսմանց համար չէ, այլ ամենայն դասական բանասիրութեան համար, բանասիրութիւնն է ուսումն մարդոյ, և դասական բանասիրութիւնն է՝ ուսումն երկու մեծամեծ սղգաց բովանդակ նիւթական և հոգեկան կենաց: Այս ճշմարտութիւնը միշտ աչաց առջև պէտք է ունենալ և գոթադրել զրութեան մէջ: